Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-777-13.02.2024-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1-ին կետով.

«30.1) **անասնագերեզմանոց՝** սպանդի ոչ ենթակա կամ չախտորոշված հիվանդությամբ հիվանդ կամ համաճարակի հետևանքով անկած կամ հոգեվարքի վիճակում գտնվող կենդանիների կամ սպառման համար չնախատեսված կամ ոչնչացման ենթակա կենդանական ծագման կողմնակի արտադրանքի համար երկարատև թաղման համար նախատեսված, հատուկ գետնահորերով (խրամներով) կամ կենսաջերմային հորերով (Բեկարի հորերով) հագեցած ցանկապատված հողատարածք.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ՝

1) հոդվածի 1-ին մասի 14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24) սպանդանոցներին ներկայացվող պահանջները, սպանդանոցների գործունեության կասեցման, սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման և սպանդային մթերքի անասնաբուժական դրոշմման կարգը.»:

3) հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 33-րդ, 34-րդ և 35-րդ կետերով.

«33) Հայաստանի Հանրապետությունում գոմաղբի, թռչնաղբի պահեստավորմանը, տեղափոխմանը, վերամշակմանը, օգտագործմանը և վարակազերծմանը ներկայացվող պահանջները.

34) գյուղատնտեսական կենդանիների շուկաներին ներկայացվող պահանջները.

35) անասնագերեզմանոցներին ներկայացվող պահանջները.:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 12.1-ին գլխով հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 12.1

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Հոդված 41.1. Սպանդանոցների գործունեության կասեցումը

1. Պետական վերահսկողության շրջանակներում սպանդանոցներին ներկայացվող պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ սպանդանոցների գործունեությունը կասեցվում է մինչև խախտումները վերացնելը, եթե հայտնաբերված խախտումը ստուգման ընթացքում չի վերացվում:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը՝

~~1.~~ լրացնել հետեւյալ բովանդակությամբ 30.1-ին կետով.

«30.1) **անասնագերեզմանոց՝** սպանդի ոչ ենթակա~~,~~ կամ չախտորոշված հիվանդությամբ հիվանդ~~,~~ կամ համաճարակի հետևանքով անկած, կամ հոգեվարքի վիճակում գտնվող կենդանիների~~,~~ կամ սպառման համար չնախատեսված~~,~~ կամ ոչնչացման ենթակա կենդանական ծագման կողմնակի արտադրանքի համար երկարատև թաղման համար նախատեսված, հատուկ գետնահորերով (խրամներով) ~~եւ (~~կամ~~)~~ կենսաջերմային հորերով (Բեկարի հորերով) հագեցած ցանկապատված հողատարածք.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ՝

1) հոդվածի 1-ին մասի **14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.**

2) հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24) սպանդանոցներին ներկայացվող պահանջները, սպանդանոցների գործունեության կասեցման~~ և դադարեցման~~, սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման և սպանդային մթերքի անասնաբուժական դրոշմման կարգը.»:

3) հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 33-րդ, 34-րդ և 35-րդ կետերով.

«33) Հայաստանի Հանրապետությունում գոմաղբի, թռչնաղբի պահեստավորմանը, տեղափոխմանը, վերամշակմանը, օգտագործմանը և վարակազերծմանը ներկայացվող պահանջները.

34) գյուղատնտեսական կենդանիների շուկաներին ներկայացվող պահանջները.

35) անասնագերեզմանոցներին ներկայացվող պահանջները.:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 12.1-ին գլխով հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 12.1

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Հոդված 41.1 Սպանդանոցների գործունեության կասեցումը

1. Պետական վերահսկողության շրջանակներում սպանդանոցներին ներկայացվող պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ սպանդանոցների գործունեությունը կասեցվում է մինչև խախտումները վերացնելը, եթե հայտնաբերված խախտումը ստուգման ընթացքում չի վերացվում:»:

Հոդված ~~3.~~ 4. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-777-13.02.2024-ՏՏԳԾ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-777-13.02.2024-ՏՏԳԾ-011/1)					
1	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «օրենքի» բառից հետո առաջարկում ենք լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը՝ «Օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «մասը» բառից հետո դրված «՝» կետադրական նշանը և «1.» համարակալումը առաջարկում ենք հանել:		
3	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք ապահովել շաղկապների կիրառման կանոնները, մասնավորապես՝ եթե թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա գործածել **«կամ»** շաղկապը, իսկ եթե թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա գործածել **«և»** շաղկապը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենքի 16-րդ հոդվածի դրույթները:		
4	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով փոփոխվող 24-րդ կետից առաջարկում ենք հանել «և դադարեցման» բառերը: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ եթե տնտեսավարող սուբյեկտը չի իրականացնում սպանադանոցային գործունեություն, ապա վերջինիս գործունեությունը համարվում է դադարեցված:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Իրավական որոշակիության տեսանկյունից Նախագծի 2-րդ հոդվածի՝ 1) «6-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը առաջարկում ենք փոխարինել «Օրենքի 6-րդ» բառերով, 2) 1-ին կետում «14-րդ» բարերից առաջ լրացնել «հոդվածի 1-ին մասի» բառերը, 3) 2-րդ կետում «24-րդ» բարերից առաջ լրացնել «հոդվածի 1-ին մասի» բառերը, 4) 3-րդ կետում «լրացնել» բառից առաջ առաջարկում ենք լրացնել «հոդվածի 1-ին մասը» բառերը: 5) **1**-ին, 2-րդ և 3-րդ կետերում «.» կետադրական նշանը առաջարկում ենք փոխարինել փակագծով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	Կառավարություն	Նախագծի նոր 3-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ կետի համաձայն. «Կառավարությունը սահմանում է սպանդանոցներին ներկայացվող պահանջները, սպանդանոցների գործունեության կասեցման,սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման և սպանդային մթերքի անասնաբուժական դրոշմման կարգը.»: Համաձայն Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ինչպես նաև իրավական որոշակիության տեսանկյունից անհրաժեշտ է օրենքի նախագծում սահմանել սպանդանոցների գործունեության կասեցման հիմքը: Ըստ այդմ առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ **«Հոդված 3.** Օրենքը լրացնել 12.1-ին գլխով հետևյալ բովանդակությամբ. **«ԳԼՈՒԽ 12.1** **ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ** **Հոդված 41.1. Սպանդանոցների գործունեության կասեցումը** 1. Պետական վերահսկողության շրջանակներում սպանդանոցներին ներկայացվող պահանջների խախտումներ հայտաբերելու դեպքում՝ սպանդանոցների գործունեությունը կասեցվում է մինչև խախտումները վերացնելը, եթե հայտնաբերված խախտումը ստուգման ընթացքում չի վերացվում:»:		
7	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված (լրամշակված 4-րդ հոդված)	Հաշվի առնելով այն, որ նախագիծը լրացվում է նոր 3-րդ հոդվածով առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը համարակալել որպես 4-րդ հոդված, ինչպես նաև «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-777[1]-13.02.2024-ՏՏԳԾ-011/1)					
1	Կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «փոխադրելը» բառից հետո առաջարկում ենք լրացնել «հանրային սննդի ծառայություններում օգտագործելը» բառերը՝ ինչը պայմանավորված է «Անասնաբուժության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում կատարված փոփոխության հետ՝ այն է հանրային սննդի ծառայություններում օգտագործել բացառապես սպանդանոցում կենդանիների սպանդից գոյացած կենդանական ծագման մթերք և կենդանական ծագման հումք, հետևաբար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» 112.8-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել լրացում:	Ընդունվել է:	
2	Կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերում «.» կետադրական նշանը անհրաժեշտ է փոխարինել փակագծով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է: